ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Լուսինե Սահակյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան
ՀՀ, Երևան, Դավիթ Բեկի 155
Էլ. հասցե՝ sahakyanlusine23@gmail.com
ORCID: 0009-0006-5057-0353
Հոդվածը ներկայացվել է 11.04.2022, գրախոսվել է 12.04.2022, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-339

Ամփոփում

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է անձի հոգեբանական ճանաչողական գործընթացների առանձնահատկություններից: Վերջիններիս կառավարման և կազմակերպման մանկավարժական ուղիների յուրացումն ու կիրառումը ուսուցչի գործունեության հաջողության գրավականն են: Մանկավարժական գործընթացը հնարավոր չէ պատկերացնել առանց հոգեբանական գիտության նվաճումների: Ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովելու գործում կարևոր է հաշվի առնել մարդու հոգեբանական որոշ առանձնահատկություններ և հոգեբանական ճանաչողական գործընթացներ, ինչպես նաև այդ գործընթացների կազմակերպման մանկավարժական ուղիները: Միևնույն ժամանակ, չի կարելի նվազեցնել գիտության մեջ ուսուցման հոգեբանության դերն ու տեղը, ուսուցման գործընթացի կապը անհատականության հոգեբանական հատկությունների հետ: Ունկնդիրների մեջ պետք է դաստիարակվի անուղղակի միջնորդավորված հետաքրքրություն: «Ուսուցիչ-ունկնդիր» փոխհարաբերությունները առանձնահատուկ ուշադրության են արժանի ուսումնական գործընթացի օպտիմալ կազմակերպման տեսանկյունից:

Բանալի բառեր՝ ուսուցման հոգեբանություն, ուսումնական դրդապատճառներ, ուսուցման արդյունավետություն, մանկավարժական հոգեբանություն, հոգեբանական հատկություններ, ճանաչողական գործընթացներ, հիշողության գործընթացներ:

Ներածություն

Մանկավարժական գործընթացն անհնար է պատկերացնել առանց հոգեբանական գիտության նվաճումների կիրառման: Սրանով զբաղվում է մանկավարժական հոգեբանությունը: Հոդվածում վերլուծվում են ուսուցման հոգեբանական առանձնահատկություններն ու դրանց նշանակությունը մանկավարժական գործունեության արդյունավետ կազմակերպման և իրակա-

նացման ընթացքում: Ուսուցման գործընթացի արդյունավետության ապահովման գործում կարևոր է հաշվի առնել անձի որոշ հոգեբանական առանձնահատկություններն ու հոգեճանաչողական գործընթացները[1], ինչպես նաև այդ գործընթացների կազմակերպման մանկավարժական ուղիները:

Ուսուցման գործընթացը՝ որպես հոգեբանական գիտության հետազոտության բնագավառ

Ուսուցումը գործունեություն է, որն ապահովում է գիտելիքների, կարողությունների հմտությունների յուրացումը:

Ուսուցումը ուսումնառողի և ուսուցանողի ակտիվ փոխազդեցության գործընթաց է[2]: Հոգեբանական կողմը դրսևորվում է ուսուցման ողջ համակարգում՝ նրա գործընթացներում, ուսուցման մեթոդների հոգեբանական հիմքերում, ուսուցման ձևերում և միջոցներում, ուսուցանողի և ուսումնառողի հոգեբանական յուրահատկություններում:

Ուսուցման հոգեբանությունը գիտական ուղղություն է, որն ուսումնասիրում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման գործընթացը և այդ գործընթացն ապահովող անհատական, իմացական և տարիքային հոգեբանական առանձնահատկությունները[3]: Այն դիտարկվում է որպես յուրահատուկ գործունեություն, որն ազդում է անձի դրդապատճառների, նպատակների, գործողությունների վրա: Հետևաբար ուսուցման հոգեբանության նպատակը նաև լիարժեք անձի հոգեբանական նորագոյացությունների և հատկությունների ձևավորումն է[4]:

Ուսուցման գործընթացում անձի հույզերի, նպատակների և դրդապատճառների հաշվառման անհրաժեշտությունը

Ուսուցման գործընթացն անմիջականորեն կապված է անձի այնպիսի հոգեբանական հասկացությունների հետ, ինչպիսիք են *հույզերը, ուսումնական նպատակները և դրդապատճառները:*

Հույզերն ակտիվացնում են ունկնդրի իմացական գործընթացները՝ կազմելով ուսումնական գործունեության հոգեբանական հիմքերը[5]: Ուսումնական գործընթացում դասախոսը պետք է նպաստի հետաքրքրության, կասկածի, զարմանքի հույզերի առաջացմանը:

Հետաքրքրությունը[6] սովորաբար երանգավորված է հույզով՝ կապված խորունկ և գործուն զգացմունքների հետ: Ուսումնական հետաքրքրությունը

---

[1] Регуш, Орлова 2011, 288-306.
[2] Клюева, Батракова, Варенова 2003, 321-351.
[3] Гамезо, Петрова, Орлова 2003, 285-291.
[4] Немов 2000, 273-284.
[5] Айсмонтас 2002, 71-90.
[6] Նալչաջյան 2016, գիրք 2, 157-173:

կախված է այն բանից, թե որքանով է ունկնդրին հասկանալի նրա ուսումնասիրած նյութի նշանակությունը, որքանով է այդ նյութն առնչվում նրա արտաուսումնական բնագավառի հետաքրքրություններին, որքանով է դասախոսը պարզ ու հասկանալի շարադրում նյութը, և որքան բազմազան են ուսուցման մեթոդները: Դաստիարակելով ուսումնական հետաքրքրություններ՝ չպետք է չարաշահել հետաքրքրաշարժությունը: Ունկնդիրները չպետք է ընտելանան անելու միայն այն, ինչը նրանց անմիջականորեն հետաքրքրում է, նրանք պետք է հասկանան, որ կյանքում վիճակված է անելու ավելին՝ առանց անմիջական հետաքրքրության: Ուստի ունկնդիրների մեջ պետք է դաստիարակել նաև անուղղակի միջնորդավորված հետաքրքրություններ, որոնք որոշվում են ոչ թե պարզապես հետաքրքրաշարժությամբ, այլ առարկայի նշանակության խոր գիտակցմամբ, այս կամ այն տեղեկության կենսական կարևորությամբ:

Դասախոսի նպատակն է ունկնդրին համապատասխան գիտության բնագավառի վերաբերյալ գիտելիքներ տրամադրելը, իսկ ունկնդրի նպատակն է իր հետագա գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ յուրացնելը[7]:

Դասախոսի գործունեության դրդապատճառ[8] կարող են լինել պարտքի ու պատասխանատվության զգացումը, սերն իր գործունեության նկատմամբ, իր ունկնդիրներին գիտելիքներով զինելու անհրաժեշտության զգացումը և այլն, իսկ ունկնդրի ուսումնական գործունեության դրդապատճառ՝ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը, գիտելիքների առկայության անհրաժեշտության գիտակցումը, ռազմաուսումնական հաստատություններում՝ նաև ազատ ելքի թույլտվության ստացումը, արձակուրդից օգտվելու հնարավորությունը և այլն: Ցավոք, հաճախ դասախոսի և ունկնդրի ո՛չ նպատակները և ո՛չ էլ դրդապատճառները չեն համընկնում: Այս դեպքում ուսումնական գործընթացի արդյունավետության մասին խոսելն ավելորդ է: Օպտիմալ տարբերակ կլինի այն դեպքում, երբ դասախոսը, իր դասավանդած առարկայի առանձնահատկություններից դուրս գալով՝ հետաքրքրություն, դրական հուզական ապրումներ, այդ գիտելիքներն ունենալու ցանկություն կառաջացնի ունկնդրի մեջ: Երբ դասախոսի *«Ես ուզում եմ սա Ձեզ սովորեցնել»* դրդապատճառը կհամընկնի *«Ես ուզում եմ հենց դա իմանամ» կամ «Ինձ սա պետք է իմանալ»* դրդապատճառների հետ: Այսպիսի մթնոլորտը և՛ դասախոսի, և՛ ունկնդրի մեջ կառաջացնի դրական հուզական վիճակներ, համաձայնեցված կդառնան ինչպես տեղեկության մատուցման, այնպես էլ դրա յուրացման հսկման և ինքնահսկման եղանակները:

---

[7] Столяренко 2003, 232-240.

[8] Гамезо, Петрова, Орлова 2003, 295-303.

Այսպիսով ուսումնական գործունեությունը կդառնա ուղղորդված և արդյունավետ: Սակայն ուսուցման արդյունավետությունը կտրուկ կնվազի, եթե ուսումնական գործընթացում նպատակների, դիրքորոշումների ու փոխադարձ դրական հոգեվիճակների համընկնման առկայությունը խախտվի:

Իմացական գործընթացների առանձնահատկությունների հաշվառումը՝ որպես ուսումնական գործունեության արդյունավետության պայման

Ուսումնական նյութի ընկալման, հասկացման և յուրացման կարևորագույն գործոններ են իմացական գործընթացները, որոնց ուսումնասիրմամբ, զբաղվում է հոգեբանական գիտությունը: Հոգեճանաչողական բոլոր գործընթացները ուսումնական գործունեության հետ ունեն անմիջական կապ, սակայն մանկավարժական հոգեբանության տեսանկյունից վերլուծենք հիմնականները՝ ուշադրությունը, հիշողությունն ու մտածողությունը:

Ուշադրությունը[9] հոգեկան ակտիվության ուղղորդումն է կոնկրետ առարկայի, երևույթի վրա՝ տվյալ առարկան կամ երևույթը դարձնելով մեր հոգեկան գործունեության օբյեկտ: Առանց այս հոգեճանաչողական գործընթացի՝ անհնար է պատկերացնել ուսումնական գործունեություն:

Ունկնդիրների ուշադրությունը ուսումնական աշխատանքի հաջողության պարտադիր պայմանն է: Ուսուցման ընթացքում ուշադրությունը կատարելագործվում է, դառնում առավել կամային, այսինքն՝ կազմակերպված, կարգավորվող, կառավարվող: Անուշադրության սովորական պատճառներն են հետաքրքրության բացակայությունը առարկայի նկատմամբ, շարադրանքի չորությունն ու անհասկանալի լինելը, ունկնդիրների հոգնածությունը:

Ունկնդիրների ուշադրության հարուցման հիմնական միջոցներն են՝

- դասերի դինամիկ վարումը՝ բազմազան հնարների կիրառմամբ,
- ունկնդիրների ակտիվության կազմակերպումը,
- ուշադրությունը շեղող գրգռիչների վերացումը,
- ուսուցման մեթոդների ճիշտ համադրումը:

Իհարկե, ուշադրություն պետք է դաստիարակել ոչ միայն շեղող գրգռիչների վերացման, այլև դրանց դիմադրելու միջոցով, դրանց շեղող ազդեցության դեմ պայքարելու ընդունակություն է պետք ձևավորել: Որոշ դեպքերում նրանք կարող են կեղծել ուշադրությունը՝ ընդունելով ուշադիր դիրք, ցուցադրելով ուշադիր հայացք, սակայն միտքը կարող է զբաղված լինել ինչ-որ կողմնակի բանով: Հետևաբար դասախոսը չպետք է կողմնորոշվի միայն ուշադրության արտաքին արտահայտությամբ, այլ անհրաժեշտ է հասնել իրական ուշադրության՝ ակտիվ ընկալման հետ զուգակցված:

[9] Նալչաջյան 2016, գիրք 1, 203-213:

Հայտնի է, որ գոյություն ունի ուշադրության երեք տեսակ՝ կամածին, ոչ կամածին և հետկամածին[10]: Կամածին ուշադրությունն առաջանում է կամային ջանքերի հաշվին: Այն պահանջում է բարձր գիտակցվածություն՝ ունկնդրից խլելով հոգեկան և նաև ֆիզիկական ուժեր: Դժվար է ունկնդրից պահանջել անընդհատ ուշադիր լինել 20 րոպեից ավելի: Սա անհրաժեշտ է իմանալ և օգտագործել նաև ուշադրության ոչ կամածին տեսակը: Այն առավել կայուն է, եթե առաջացել է ունկնդրի հետաքրքրությունների հաշվին: Հոգեբանները պնդում են, որ հասկացման հիմքը ուշադրությունն է: Եթե դասախոսը կարողացել է սևեռել ունկնդրի ուշադրությունն ուսումնական նյութի վրա, ապա ուսուցման արդյունավետության կեսն ապահովված է:

Մանկավարժական հոգեբանությունն առաջարկում է ունկնդրի ուշադրության առաջացման և պահպանման հետևյալ միջոցները՝

- ուսումնական նյութի կարևոր հանգույցների ուժեղացում, որը կարելի է կազմակերպել կրկնությունների կամ տարբեր զգայարանների վրա ազդելու հաշվին, օրինակ՝ նույն տեղեկույթը և՛ բարձրաձայնել, և՛ ցուցադրել սլայդերով կամ այլ գունային գրավիչ միջոցներով.
- ամբողջովին օգտագործել բանավոր խոսքի հնարավորությունները՝ ձայնի բարձրությունը, տեմպն ու ինտոնացիան, դադարները, շեշտադրումները.
- հաշվի առնել ունկնդրի հուզական և դրդապատճառային համակարգը[11], որի հաշվին ունկնդրի ուշադրությունն զգալիորեն կարող է աճել.
- համակարգել նյութը՝ անընդհատ եզրահանգումներով և հետևություններով: Տալ նյութի տրամաբանական զարգացման գծապատկերը.
- ուշադրության գրավման միջոց է նաև անսպասելիությունը և «սպասման» իրավիճակի ստեղծումը.
- ուսումնական նյութի շարադրման ժամանակ պետք է հաշվի առնել նաև ունկնդրի իմացական պահանջմունքները:

Ուսումնական գործընթացն անխզելիորեն կապված է մեկ այլ իմացական գործընթացի՝ հիշողության հետ: Այն մասնագիտական գրականության մեջ սահմանվում է որպես ընկալված տեղեկույթի մտապահման, պահպանման և վերարտադրման գործընթաց[12]: Ուսուցման գործընթացի արդյունավետությունն ուղիղ կապված է հիշողության գործընթացների՝ մտապահման, պահպանման, վերարտադրման և մոռացման հետ:

Հիշողության գործընթացի առաջին փուլը մտապահումն է[13]: Դրա շնորհիվ ընկալված տեղեկությունները մուտք են գործում հոգեկան մակարդակ՝

[10] Марцинковская 2013, 239-245.
[11] Зимняя 2009, 224-233.
[12] Նալչաջյան 2016, գիրք 1, 338-340:
[13] Немов 2003, 217-259.

կապվելով նախկինում մարդու ձեռք բերած գիտելիքների հետ[14]: Հոգեբան Բ. Զեյգարնիկի կարծիքով՝ մարդն ավելի լավ է մտապահում անավարտ գործողությունները, իրադրությունները, խնդիրները: Մտապահումն ուղղակիորեն կախված է ունկնդրի գործունեության բնույթից: Բազմաթիվ դիտումներն ու փորձերը ցույց են տվել, որ մտապահումն առավել արդյունավետ է, երբ այն տեղի է ունենում որևէ ակտիվ գործունեության մեջ: Օրինակ՝ զինվորական հոգեբանության պարապմունքների ընթացքում ունկնդիրներին առաջադրվել է մի դեպքում մտապահել որոշակի տեքստեր՝ նյութի հետ ոչ մի ակտիվ աշխատանք չկատարելով, մյուս դեպքում մտապահման խնդիր չդնել, բայց տեքստի հետ կատարել որոշակի աշխատանք՝ գտնելով իմաստային սխալները: Պարզվեց, որ երկրորդ դեպքում մտապահումն ավելի արդյունավետ էր: Այդ արդյունավետությունը էապես կախված է դիրքորոշումից: Կարող են լինել մտապահման տարբեր դիրքորոշումներ հիշողության մեջ երկարատև կամ կարճատև պահպանման, նույնությամբ վերարտադրման կամ իր բառերով վերարտադրման:

Դասախոսի դերն այն է[15], որ ունկնդրի մեջ ստեղծի համապատասխան դիրքորոշում՝ նշելով, թե ինչը պետք է մտապահել ժամանակավորապես, ինչը՝ մշտապես, իսկ ինչը բոլորովին էլ պետք չէ մտապահել, բավական է միայն հասկանալ:

Մտապահմանը հաջորդում է հիշողության հաջորդ գործընթացը՝ պահպանումը[16]: Պահպանման գործընթացով ընկալված տեղեկությունները կուտակվում են տևական հիշողության մեջ: Պահպանման երկարատևությունը կախված է ընկալվող նյութի իմաստավորումից: Փաստ է, որ ինչքան երկար է յուրացման ժամանակահատվածը, այնքան ամուր է պահպանումը: Գիտելիքները, որոնք ձեռք են բերվել կարճատև ժամանակահատվածում, օրինակ՝ սեմինար պարապմունքից կամ քննությունից առաջ, որակական առումով միշտ զիջում են երկարատև ժամանակահատվածում ընկալված և յուրացված գիտելիքներին: Քննության կամ սեմինարի պատրաստվելիս ունկնդրին միշտ օգնում է կարճատև հիշողությունը, իսկ կազմակերպված երկարատև և լուրջ աշխատանքի ժամանակ՝ մտածողությունը:

Ուսումնական նյութը լավ իմանալու համար անհրաժեշտ է ունկնդրի մեջ մշակել ճիշտ ու համակարգված աշխատանքի հմտություններ: Կարևոր է հիշել, որ յուրաքանչյուր նոր ուսումնական նյութի շարադրում պետք է սկսել ունկնդրի արդեն իսկ ունեցած գիտելիքների հիման վրա, որը հնարավորություն կտա վերականգնելու հիշողության մեջ այն նախկին գիտելիքները, որոնք անհրաժեշտ են նոր նյութի յուրացման համար:

---

[14] Маклаков 2012, 247-281.
[15] Ключо 2015, 77-84, 88-91.
[16] Рубинштейн 2000, 292-301.

Անհրաժեշտ գործունեություն ծավալելու համար հոգեկանում գոյություն ունեցող գիտելիքները պետք է վերարտադրվեն՝ տևական հիշողությունից անցնելով օպերատիվ հիշողության մակարդակ: Դա տեղի է ունենում վերարտադրության շնորհիվ: Տևական հիշողությունից օպերատիվ հիշողության մեջ նախկինում մտապահված գիտելիքների վերադարձի գործընթացը անվանում են վերարտադրություն:

Մոռացումն այն գործընթացն է, երբ տեղեկույթը սխալ է վերարտադրվում կամ ընդհանրապես չի վերարտադրվում: Դրա պատճառը կարող է լինել մտապահման, պահպանման կամ բուն վերարտադրության ձախողումը: Համաձայն գերմանացի գիտնական Հերման Էբինհաուզի բացահայտած օրինաչափության՝ յուրաքանչյուր նոր գիտելիք սովորելիս սկզբում սովորածի զգալի մասը շատ արագ մոռացվում է, որից հետո մոռացման ընթացքը դանդաղում է[17]: Կա ևս մեկ օրինաչափություն. երբեմն նոր նյութը սովորելուց անմիջապես հետո լրիվությամբ գրեթե չի վերարտադրվում: Սակայն արդեն մի քանի օր անց նկատվում է հակառակ պատկերը. որոշ ժամանակ առաջ սովորած նյութը մանրամասնորեն հնարավոր է լինում վերարտադրել: Այդ երևույթը կոչվում է ռեմինիսցենցիա, և նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ մարդ սովորած նյութը լավ հասկացել է, այլ ոչ թե ընդամենը անգիր արել:

Հիշողության գործընթացների կազմակերպում ասելով ենթադրում ենք՝

- ուսումնական նյութի հանգուցային հասկացությունների, մտքերի առանձնացում, դրանց իմաստավորում.
- ուսումնառողի մեջ երկարատև մտապահման դիրքորոշման ստեղծում.
- մտապահումը կազմակերպելիս ունկնդրի ակտիվության ապահովում «տրամաբանական դատողությունների, կապերի և զգայական տարբեր օրգանների միացման միջոցով».
- սովորած նյութի կրկնում և արդեն հայտնի տեղեկության մշակում:

Ուսուցումը ինքնին մտածողության գործընթաց է: Մտածողությունը տարբեր մարդկանց մեջ տարբեր է ընթանում:

Շրջապատող աշխարհի մասին տեղեկությունները մարդ ստանում է զգայությունների և ընկալումների միջոցով: Թեև դրանք շատ կարևոր իմացական գործընթացներ են, այնուամենայնիվ, բավարար չեն կարող լինել շրջապատող աշխարհի բարդ երևույթները հասկանալու համար:

Մտածողությունը բարձրագույն իմացական գործընթաց է, որի շնորհիվ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական ընկալման միջո-

[17] Маклаков 2012, 247-281.

ցով ստացված տվյալների սահմաններից և բացահայտել երևույթների ներքին, էական, օրինաչափ կապերն ու հատկանիշները[18]:

Անձի մտածական գործունեության առանձնահատկությունները կապված են նրա նյարդային համակարգի գործընթացների գրգռման և արգելակման դինամիկայի հետ[19]: Ունկնդրի մտածողության առանձնահատկությունների մասին գիտելիքները հնարավորություն կտան դասախոսին պատկերացում ունենալու ունկնդրի մտավոր կարողությունների, ընդունակությունների մասին:

Ուսումնական գործունեության յուրահատուկ կազմակերպման ազդեցությամբ էական փոփոխություններ են տեղի ունենում ունկնդիրների մտածողական գործունեության մեջ[20], մտավոր աշխատանքի բնույթի մեջ: Գնալով ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում դասախոսությունները, լաբորատոր և այլ գործնական պարապմունքների ինքնուրույն կատարումը, ռեֆերատներ գրելը. ունկնդիրն ավելի հաճախ ինքնուրույն է ըմբռնում ուսումնասիրվող նյութը, որի հետևանքով մտածողությունը ստանում է ավելի ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական բնույթ:

Մտածողական գործունեությունը բնութագրվում է ընդհանրացման և վերացարկման առավել բարձր մակարդակով, երևույթներին պատճառական բացատրություն տվող միտումով, առանձին դրույթների ճշմարիտ կամ կեղծ լինելը փաստարկելու, ապացուցելու կարողությամբ, լուրջ եզրակացություններ անելու, ուսումնասիրվելիքը համակարգի բերելու կարողությամբ: Զարգանում է ունկնդիրների մտածողության քննադատականությունը: Այս բոլորը տեսական, իրական մտածողության և շրջապատող աշխարհի ընդհանուր օրենքները, բնության և հասարակության զարգացման օրենքները ճանաչելու ընդունակության ձևավորման նախադրյալներն են:

Ուսուցման գործընթացում ունկնդիրը պետք տիրապետի ինքնուրույն մտածելու կարողությանը, ինքնուրույն մտավոր աշխատանքին, գիտելիքները ինքնուրույնաբար ձեռք բերելու մեթոդիկային և տեխնիկային, կամ, ինչպես ասում են, տիրապետի ինքնուսուցման կարողությանը: Շատ հաճախ մտածական գործունեության մեջ ինքնուրույնության բացակայությունը ունկնդիրների աշխատանքի էական թերություններից մեկն է, որը բացատրվում է ուսումնական խնդրի այնպիսի դրվածքով, երբ ունկնդրից չի պահանջվում դատողություն, ինքնուրույն միտք, սեփական կարծիք, երբ ամեն ինչ հանգեցվում է ուրիշի մտքերը, ուրիշի փաստարկումները վերարտադրելուն: Այս առումով դասախոսները պետք է հաշվի առնեն, որ ունկնդիրները հակված են մեծ ուշադրություն դարձնելու այս կամ այն դրույ-

[18] Նալչաջյան 2016, 485-488:
[19] Ефимова 2013, 132-140.
[20] Ключо, Сухарева 2015, 77-84, 88-91.

թի փաստարկվածությանը և ապացուցվածությանը: Դասախոսի խնդիրն է այնպիսի ընթացք տալ վերլուծությանն ու քննարկմանը, որ ունկնդիրը ինքնուրույնաբար ճիշտ եզրահանգի:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է կազմակերպել ունկնդրի մտածական գործունեությունը: Դա ենթադրում է՝

- մտածողության բոլոր գործառույթների կիրառում.
- մտածողության վերը նշված տեսակների օգտագործում.
- մտածողության վերը նշված անհատական առանձնահատկությունների հաշվառում.
- վերարտադրողական մտածողության հիմքի վրա ստեղծագործական մտածողության տարրերի կիրառման խրախուսում:

Եզրակացություններ

1. Մանկավարժական գործունեությունն անմիջականորեն կապված է հոգեբանական գիտության հետ: Հետևաբար, յուրաքանչյուր մանկավարժ, դասախոս պետք է ունենա հոգեբանական գիտելիքների որոշակի պաշար՝ այն արդյունավետ իրականացնելու համար:

2. Ուսումնական գործունեության ընթացքում պետք է հաշվի առնել ունկնդիրների անհատական հոգեբանական և հոգեճանաչողական գործընթացների առանձնահատկությունները:

Օգտագործված գրականություն

Նալչաջյան Ա.Ա. 2016, Հոգեբանության հիմունքներ: Գիրք 1, 2-րդ բարեփոխված հրատարակչություն, Երևան, «Բուկինիստ», 672 էջ:

Նալչաջյան Ա.Ա. 2016, Հոգեբանության հիմունքներ: Գիրք 2, 2-րդ բարեփոխված հրատարակչություն, Երևան, «Բուկինիստ», 544 էջ:

Айсмонтас Б.Б. 2002, Педагогическая психология: схемы и тесты, Москва, «Владос-Пресс», 208 с.

Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М. 2003, Возрастная и педагогическая психология, Москва, «Педагогическое общество России», 512 с.

Ефимова Н.С. 2013, Основы общей психологии, Москва, изд. «Форум», «Инфра-М», 288 с.

Зимняя И.А. 2009, Педагогическая психология. Изд. 2-е доп., испр. перераб., Москва, «Логос, 384 с.

Клюева Н.В., Батракова С.Н., Варенова Ю.Л. и др. 2003, Педагогическая психология, Москва, «Владос-Пресс», 400 с.

Ключо О.И., Сухарева Н.Ф. 2015, Педагогическая психология, Москва, Берлин, «Директ-Медиа», 235 с.

Маклаков А.Г. 2012, Общая психология, Санкт-Петербург, «Питер», 583 с.

Марцинковская Т.Д. 2013, Психология, Москва, «Академия», 400 с.

Немов Р.С. 2000, Психология в 3-х кн., 3-е изд., Москва, «Владос», кн. 2: Психология образования, 608 с.
Немов Р.С. 2003, Психология в 3-х кн., 4-е изд., Москва, «Владос», кн. 1: Общие основы психологии, 688 с.
Регуш Л.А., Орлова А.В. 2011, Педагогическая психология, СПб., «Питер», 416 с.
Рубинштейн С.Л. 2000, Основы общей психологии, СПб., «Питер», 712 с.
Столяренко Л.Д. 2003, Педагогическая психология. Серия «Учебники и учебные пособия», 2-е изд., перераб. и доп., Ростов н/Д, «Феникс», 544 с.

ПСИХОЛОГИЯ ОБУЧЕНИЯ КАК ОСНОВА ЭФФЕКТИВНОГО ОСУЩЕСТВЛЕНИЯ ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Лусине Саакян

Резюме

Эффективность процесса обучения зависит от психологических особенностей личности и психопознавательных процессов. Освоение и применение педагогических путей управления и организации последних является залогом успеха деятельности педагога. Педагогический процесс невозможно представить без достижений психологической науки. В обеспечении эффективности процесса обучения важно учитывать некоторые психологические особенности и психопознавательные процессы человека, а также педагогические пути организации этих процессов. При этом нельзя умалять роль и место психологии обучения в науке, связь процесса обучения с психологическими особенностями личности. Следует воспитывать у слушателей косвенные опосредованные интересы. Заслуживают особого внимания взаимоотношения «преподаватель-слушатель» с точки зрения оптимальной организации учебного процесса.

Ключевые слова – психология обучения, мотивация обучения, эффективность обучения, педагогическая психология, психологические признаки, познавательные процессы, процессы памяти.

PSYCHOLOGY OF LEARNING AS A BASIS FOR EFFECTIVE IMPLEMENTATION OF PEDAGOGICAL ACTIVITY

Lusine Sahakyan

Abstract

The effectiveness of the learning process depends on the psychological characteristics of the individual and psycho-cognitive processes. The development and application of pedagogical ways of management and organization of the latter is the key to the success of the pedagogue's activity. The pedagogical process cannot be imagined with-

out the achievements of psychological science. It is shown that in providing the effectiveness of the learning process, it is important to take into account some psychological features and psycho-cognitive processes of a person, as well as pedagogical ways of organizing these processes. In the frames of this contribution the role and place of the psychology of learning in science, the connection of the learning process with the psychological characteristics of the individual are presented, the necessity of educating students of indirect mediated interests is substantiated, the motives of the educational activity of the lecturer and the listener, the relationship "lecturer-listener" are described from the point of view of the optimal organization of the educational process, as well as the main types of cognitive processes are analyzed (attention, memory and thinking in the educational process).

Key words – psychology of learning, motivation of learning, effectiveness of learning, pedagogical psychology, psychological features, cognitive processes, memory processes.